ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 23-Ա

4 նոյեմբեր 2019 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու յոթերորդ արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիտավան համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

2. Դիտավան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում Աշոտ Հայկի Պարոնյանի ինքնակամ կառույցը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին:

Կողմ (3)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Յարալյան Վաղինակ		
Մանուչարյան Ֆելիքս		
Բայրամյան Միքայել		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Սարիբեկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 24-Ն

04 նոյեմբեր 2019 թվական

2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիտավան համայնքի 2019 թվականի բյուջեի ծախսային մասում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ: 2019թ. նոյեմբերի 2-ին այրվել է համայնքի բնակիչ Շիրակ Ուսուբովի բնակելի տունը և գույքը ամբողջությամբ և հաշվի առնելով կնոջ՝ Նուբար Սարուխանյանի դիմումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5 և 6-րդ կետերով ավագանին որոշում է.

1.Պահուստային ֆոնդում 4891 հոդվածում նախատեսված 80 000 /ութանասուն հազար/ դրամը և 4726 հոդվածից 20 000/քսան հազար/ դրամը, ընդամենը 100 000/ մեկ հարյուր հազար/ դրամ տեղափոխել 4729/այլ նպաստներ բյուջեից/ հոդված Նուբար Սարուխանյանին միանվագ դրամական օգնություն տրամադրելու նպատակով:

Կողմ (3)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Յարալյան Վաղինակ		
Մանուչարյան Ֆելիքս		
Բայրամյան Միքայել		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Սարիբեկյան

(Կ. Տ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 25-Ա

04 նոյեմբեր2019 թվական

ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՇՈՏ ՀԱՅԿԻ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 912-Ն և 2003 թվականի ապրիլի 17-ի 470-Ն որոշումների պահանջներով՝ որոշում է.

1. Դիտավան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող /ծածկագիր 11-026-0111-0004/ 0.041115 հա արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում Աշոտ Հայկի Պարոնյանի կողմից 1989 թվականին կառուցված և համայնքային սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցը /նկուղ 26,4 քմ արտաքին մակերեսով, 1-ին հարկ 137,05 քմ արտաքին մակերեսով, ձեղնահարկ 60,76 քմ արտաքին մակերեսով/ ճանաչել օրինական:

2.Օրինականացված ինքնակամ կառույցի նկատմամբ Դիտավան համայնքի սեփականության իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկություն ներկայացնել Աշոտ Հայկի Պարոնյանին ինքնակամ կառույցի համար համայնքի բյուջե մուծել 26,4 քմ արտաքին մակերեսով նկուղի համար 17424 դրամ, 137,05 քմ արտաքին մակերեսով 1-ին հարկի համար 90453 դրամ, 60,76 քմ արտաքին մակերեսով ձեղնահարկի համար 40102 դրամ իսկ դրանց սպասարկման

անհրաժեշտ 411.15 քմ հողամասի համար 59206 դրամ:

3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

4. Ինքնակամ կառույցի պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին և համայնքի գլխավոր հատակագծի պահանջներին, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5. Ինքնակամ կառույցը չի գտնվում պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրի նախատեսված գոտիներում:

6. Առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած Աշոտ Հայկի Պարոնյանին գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով գնել 26,4 քմ արտաքին մակերեսով նկուղ 17424 դրամ, 137,05 քմ արտաքին մակերեսով 1-ին հարկ 90453 դրամ, 60,76 քմ արտաքին մակերեսով ձեղնահարկ 40102 դրամ իսկ դրանց սպասարկման համար անհրաժեշտ 411.15 քմ հողամաս 59206 դրամ :

7. Ինքնակամ կառույցը համայնքային սեփականություն ճանաչելու և օրինականացնելու հետ կապված պետական գրանցման ծախսերը Աշոտ Հայկի Պարոնյանի հաշվին:

	Կողմ (3)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Յարալյան	Վաղինակ		
Մանուչարյան	Ֆելիքս		
Բայրամյան	Միքայել		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հակոբ Սարիբեկյան**

(Կ. Տ.)